ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 85-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13.03.2020Թ. N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 13.03.2020թ. «Հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, սեփականության իրավունքով (պայմանով) գրանցելու, գույքի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու, Ալավերդի համայնքի ղեկավարի 25.12.2019թ. N 410-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 84-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ալավերդի համայնքի Դեբեդ թաղամասի արևելյան մասում գտնվող, 797.0 քմ մակերեսով շինության (գրասենյակների) նկատմամբ ճանաչել Արսեն Գառնիկի Միսկարյանի սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. մարտի 17
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 86-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-002-0045-0010 ԾԱԾԿԱԳՐՈՎ, «ԱՆՈՒՇ» ԲԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 0.97987 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ, 10-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Կոշաբերդ փողոցի արևելյան մասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0045-0010), 0.97987 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Կոշաբերդ փողոց, N 10 փոստային հասցե:
2. Հաստատել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Կոշաբերդ փողոց, N 10 հասցեում գտնվող, «ԱՆՈՒՇ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (ծածկագիր՝ 06-002-0045-0010), 0.97987 հա մակերեսով արտադրական գործառնական նշանակության հողամասի գծային սահմանային չափերը՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
3. Տալ համաձայնություն «ԱՆՈՒՇ» ԲԲԸ-ի անվամբ իրավունքի պետական գրանցում ստացած 0.97987 հա մակերեսով հողամասի սահմանային չափերը փոփոխելու՝ համաձայն որակավորում ունեցող անձի կողմից տրված հատակագծի:

4. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. մարտի 17
ք. Ալավերդի